ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ

ԴԱՇԻՆՔ

ՀՀ. ք. Երևան, Կորյունի 19Ա, 4-րդ հարկ, հեռ (374) 10 52 09 74, (091) 120201

հ. 0055
05.06.2009թ

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական ընտրական հանձնաժողովին

Դիմում-բողոք

Կից ներկայացնում եմ Երևան քաղաքի ավագանու 31 մայիսի 2009թ անցկացված ընտրությունների ընթացքում "ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ" նախընտրական դաշինքի վստահված անձանց, ավագանու թեկնածուների և այլոց կողմից ընտրախախտումների վերաբերյալ կազմած արձանագրությունների, ներկայացված բողոքների, հանցագործությունների մասին հաղորդումների և հատուկ կարծիքների լուսապատճենները:

Առաջարկում եմ Երևանի ավագանի 31.05.2009թ անցկացված ընտրությունները ճանաչել անվավեր, քանի որ արձանագրված խախտումները կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա, ինչպես նաև հնարավոր չէ պարզել ընտրությունների իրական արդյունքները:

Անհրաժեշտ եմ համարում նաև հանձնաժողովի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 138.18 հոդվածի 7-րդ կետում նշված "կարող էին" բառի իմաստն այն է, որ խախտման առկայությունը, անկախ նույնիսկ դրա ընտրությունների արդյունքների վրա ազդած լինելու փաստացի հանգամանքից, բավարար հիմք է ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչելու համար:

Առդիր՝ „364„ թերթից

"ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ" դաշինքի
Նախընտրական դաշինքի լիազոր ներկայացուցիչ,
Վստահված անձ

Պատվական Հովակիմյան

Մուտք № 4-165
«5» 06 2009թ.